ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի վեցերորդ մասով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ծաղկունք համայնքի ավագանու
2019 թվականի նոյեմբերի 19-ի N10 արտահերթ
նիստի թիվ 32 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
4. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺՊ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

17/27.3/26209-19
14.11.19

0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
էլ. փոստ՝ press@moj.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ԾԱՂԿՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Կարապետյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 224 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**

Մտից 347
18-11-2019 թ.

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ան.Գևորգյան, հեռ. 594116

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» որոշումների նախագծերի վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախաագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման նախագծի՝

1/ Հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի բ/ պարբերությունում ««ա» ենթակետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին ենթակետի «ա» պարբերությունով» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները.

2/ Հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի գ/ պարբերությունում «հոդվածի 1-ին մասի 1-ին կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, որոնց համաձայն ենթաօրենսդրական ակտը հոդվածներ չի կարող ունենալ:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնիք ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 04-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N38-ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) համայնքի վարչական բյուջեում՝ ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման համար վճար տողում, ավելացնել եկամուտ 2710.0 հազ. (երկու միլիոն յոթ հարյուր տասը հազար) դրամ:

2) 01.1.1 - 4111 հոդվածից պակասեցնել 2650.0 հազ. (երկու միլիոն վեց հարյուր հիսուն հազար) դրամ

4112 հոդվածից պակասեցնել 410.0 հազ. (չորս հարյուր տասը հազար) դրամ

4221 հոդվածից պակասեցնել 64.2 հազ. (վաթսունչորս հազար) դրամ

4234 հոդվածից պակասեցնել 70.0 հազ. (յոթանասուն հազար) դրամ

4241 հոդվածից պակասեցնել 360.0 հազ. (երեք հարյուր վաթսուն հազար) դրամ

4252 հոդվածից պակասեցնել 100.0 հազ. (մեկ հարյուր հազար) դրամ

3) 01.6.1 - 4269 հոդվածից պակասեցնել 100.0 հազ. (մեկ հարյուր հազար) դրամ

4) 08.2.4 - 4237 հոդվածից պակասեցնել 100.0 հազ. (մեկ հարյուր հազար) դրամ

4239 հոդվածից պակասեցնել 100.0 հազ. (մեկ հարյուր հազար) դրամ

4267 հոդվածից պակասեցնել 800.0 հազ. (ութ հարյուր հազար) դրամ

5) 11.1.2 - 4891 հոդվածից պակասեցնել 685.8 հազ. (վեց հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր) դրամ:

Գումարը ընդամենը՝ 8150.0 հազ. (ութ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) դրամը բաշխել հետևյալ հոդվածներին

6) 01.6.1 - 4241 հոդվածին ավելացնել 60.0 հազ. (վաթսուն հազար) դրամ

7) 04.2.4 - 4657 հոդվածին ավելացնել 6821.4 հազ. (վեց միլիոն ութ հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր) դրամ

8) 06.3.1 - 4241 հոդվածին ավելացնել 750.0 հազ. (յոթ հարյուր հիսուն հազար) դրամ

9) 08.2.4 - 4269 հոդվածին ավելացնել 518.6 հազ. (հինգ հարյուր տասնութ հազար վեց հարյուր) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 34-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 14-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2019
թվականի նոյեմբերի 19 -ի թիվ 34-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ԳԼՈՒԽ 1
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար** դրամ,

բ. սույն 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար** դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար** դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար** դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հարյուր հազար** դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար** դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար** դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար** դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար** դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար** դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար** դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար** դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **հինգ հազար** դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար հինգ հարյուր** դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար** դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանմեկ հազար** դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեսուն հազար** դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վաթսուն հազար** դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **հինգ հազար** դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար հինգ հարյուր** դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասնհինգ հազար** դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսանմեկ հազար** դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեսուն հազար** դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վաթսուն հազար** դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երեք հարյուր հիսուն** դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **քսան հազար** դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **յոթանասուն հազար** դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երեք հարյուր հազար** դրամ,

դ. խաղատների համար՝ **յոթ հարյուր հազար**,

ե. շահումով խաղերի համար՝ **երեք հարյուր հազար** դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ **մեկ հարյուր քսան հազար** դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար** դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **յոթ հազար** դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասմնեկ հազար** դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնյոթ հազար** դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսանհինգ հազար** դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քառասուն հազար** դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հարյուր** դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար հինգ հարյուր** դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հազար** դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար** դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասը հազար** դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսան հազար** դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար** դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երեք հազար հինգ հարյուր** դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ **զրո** դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հազար հինգ հարյուր** դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի **25 %-ի չափով**,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի **10 %-ի չափով**.

12) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **մեկ հարյուր հազար** դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **տասը հազար** դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հինգ հարյուր հազար** դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար** դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն** դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն** դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն** դրամ.

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար **հիսուն հազար** դրամ

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **տասը հազար** դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար** դրամ:

ԳԼՈՒԽ 2
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **երկու հազար** դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **երկու հազար** դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **երկու հազար** դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **հինգ հազար** դրամ,

6) աղբահանության վճար վճարողների համար բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական *մեկ հարյուր դրամ*, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **տասը** դրամ,

7) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **հիսուն** դրամ,

բ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **քսան** դրամ,

գ. վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **տասնհինգ** դրամ,

դ. գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **երեք** դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **ութ** դրամ,

ե. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **տասը** դրամ,

8) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

ԾԱՂԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺՊ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքում կազմակերպված հանրային լսումների արձանագրությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ներտնտեսային ոռոգման համակարգի վերակառուցման և վերականգնման աշխատանքները կատարելու համար տալ համաձայնություն՝ համայնքի բյուջեից կատարելու համաֆինանսավորում ծրագրի նախագծանախահաշվային արժեքի 10%-ի չափով:

2. Համայնքի ղեկավար Դավիթ Կարապետյանին՝ կնքել համաֆինանսավորման պայմանագիր և իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**